

ԿԱՐԾԻՔ

ԱՆՆԱ ԳԱԳԻԿԻ ԵՂՅԱՆԻ

«ԱՆԳԼԵՐԵՆ ԸԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ»

ԹԵՄԱՅՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԳ.00.02 «ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»

/ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Պաշտպանության ներկայացված խնդրո առարկա ատենախոսությունը վերաբերում է անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման խնդրին, որի կարևորությունը մեզանում գնալով աճում է երկրաչափական պրոգրեսին համապատասխան: Ուստի, այս թեմայի ընտրությունը, մեր կարծիքով, ամենին էլ պատահական չէ:

Ատենախոսությունը կազմված է Ներածությունից, երկու հիմնական գլուխներից, Եզրակացությունից, Օգտագործված գրականության ցանկից (էջ 130-142, օգտագործվել է 152 անուն՝ աղբյուրներ և ուսումնասիրություններ) և Հավելվածներից (էջ 143-189): Միասին վերցրած այս ամենը կազմում է 189 համակարգչային էջ:

Աշխատանքի ներածականում տրված են թեմայի արդիականությունը, հետազոտման օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքը, գիտական նորությունը, վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության հիմնական փուլերը, արդյունքների արժանահավատությունը,

ներդրումը և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Այս ամբողջը կազմում է ընդամենը 7 էջ (էջ 3-9):

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Ճարտարապետական տեքստերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները բուհ-ում (էջ 10-61)», ատենախոսի կողմից բաժանված է 3 հիմնական պարագրաֆների.

ա/ Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները տեխնիկական բուհում,

բ/ Ճարտարապետական կողմնորոշման բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքներ տեխնիկական բուհում,

գ/ Ճարտարապետական անհրաժեշտ բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները:

Այստեղ ատենախոսը ընդհանուր ամամբ հաղթահարել է իր առջև դրված խնդիրները: Նրա համար Ճարտարապետությունը մի երևույթ է, որը իրավացիորեն ծնունդ է առել հասարակության պատմության հետ: Յուրաքանչյուր անհատին և հասարակությանը Ճարտարապետությունը շրջապատում է ամենուր՝ սկսած տանը գտնվելու պահից և, բնականաբար, նրանից դուրս լինելու պարագայում: Հեղինակը գտնում է, որ կան բազմաթիվ համաշխարհային հռչակ ձեռք բերած կոթողներ, որոնք ունեն իրենց միջազգային անվանումները, որոնցից է օրինակ Հռոդոսյան կոթողը (Colossus of Rhodes, ռուս. Родосский колосс; հին հուն. Κολοσσός Ῥόδιος, լատ. Colossus Rhodius, ֆրանս. Le Colosse de Rhodes, գերմ. Der Koloss von Rhodos): Ինչպես տեսնում ենք հայերենում այն ունի իր բուն հայկական անվանումը, որը տարբերվում է միջազգայնից, այդ թվում ռուսերենից: Ուստի չափից ավելի կարևոր է Ճարտարապետա-շինարարական հայերենով բառարանի առկայությունը:

Հենվելով նմանատիպ բազմաթիվ վերլուծությունների վրա հեղինակը իրավացիորեն գտնում է, որ «...Ճարտարապետական եզրույթները շատ արագ են տարածվում, անցնում մայր լեզվից մեկ այլ լեզու: Գիտության մեջ դա տեղի է ունենում գիտական տեղեկատվության փոխանակման գործընթացում: Չնայած

Ճարտարապետական տերմինները համամարդկային բնույթ ունեն, բայց որոշակի ժամանակային սահմաններում նրանք մնում են որպես ազգամշակութային իրակություն կամ բաց /լակունա/: Դրա հետ մեկտեղ, ճարտարապետական իրակություններն այն ժողովրդին են պատկանում, որի մշակույթի և լեզվի սահմաններում առաջացել են: Որպես վառ օրինակ կարելի է ներկայացնել «ամրոց» բառը որպես եզրույթ և հասկացույթ» (Տես՝ խնդրո առարկա ատենախոսության էջ 30-31-ը):

Լիովին համամիտ ենք հեղինակի առաջադրած դրույթներին, բայց, մեր կարծիքով, կարելի էր գոնե առանձին դեպքերում ներկայացնել նույն տեքստի նաև ռուսերեն տարբերակը ևս, որը խնդրին կտար առավել ավարտուն տեսք: Սրա օգտին է խոսում թեկուզ այն հանգամանքը, որ գրականության ցանկում նշված է 152 գործի անուն, որոնցից մոտ 60-ը ռուսերենով են: Սա առավել ևս այն հանգամանքի դեպքում, որ, ինչպես խոստովանում է ատենախոսը, հայերեն, ռուսերեն և անգլերեն հասկացութային դաշտերի համեմատությունից երևում է, որ դրանք հիմնականում չեն համընկնում անգամ փոխառության կամ պատճենման առկայության պարագայում (էջ 58):

Աշխատության առաջին գլխի նման երկրորդը ևս բաժանվել է երեք պարագրաֆների.

ա/ Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները,

բ/ Ճարտարապետական տեքստերի ընթերցման ռազմավարությունները,

գ/ Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը:

Ժամանակակից դիդակտիկայում առանձնացնում են ռազմավարությունների երկու խումբ՝ հիմնական և օժանդակ: Կարևոր է այն, թե ինչ ռազմավարություններ են օգտագործվում տեքստի իմաստը հասկանալու համար (Reading and Word-Attack Strategies): Դրանցից կարելի է առանձնացնել

հետևյալները՝ պատկերացնել կամ առարկայացնել, հարցրել տալ և պատասխանել հարցերին, վերապատմել և ամփոփել, կապել տեքստը կյանքի փորձի, այլ տեքստի, կամ նախորդող գիտելիքների հետ, բառագրոհ ռազմավարություն կիրառել: Այնուհետև պարզաբանվում է, թե դրանցից որը ինչ պարագայում է առավել նպատակահարմար կիրառելը (էջ 81-100):

Ուսուցման բարդ պրոցեսի տարբեր փուլերում սովորողներն անցնում են փորձարկումների բարդ ճանապարհով, մինչև կկարողանան ինքնուրույն գտնել տեքստեր, որից առանձնացնում են առանցքային բառերը, բառակապակցությունները, մասնագիտական տերմինները և այլն: Ապա կազմում նախադասություններ, օգտագործում դրանք տարբեր ուսումնա-խոսքային իրադրություններում:

Ուսուցման գործընթացում, ինչպես իրավացիորեն նշում է հայցորդը, կարևոր օղակ է ընթերցած նյութի ամրապնդումը, ստուգումը և գնահատումը: Ստուգման ձևերը կարող են լինել ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական, երբ կիրառում են բանավոր կամ գրավոր թեստեր և այլն: Գլուխը ամփոփված է եզրակացություններով, որտեղ մեծ տեղ է հատկացված կրեոլ բնագրաին տեքստերի վրա կատարվող աշխատանքներին: Կարևորվել է բառարանների հետ ճիշտ աշխատելու ձևի և մեթոդի պարզաբանումը: Մեծ կարևորություն ունի նախագծային մեթոդի կիրառումը, որը հնարավորություն է տալիս ստեղծել բնական լեզվական միջավայր:

Ատենախոսությունը ավարտվում է եզրակացություններով (էջ 128-129), որոնք թվով տասն են:

Հետազոտության կարևոր բաղկացուցիչներից են 13 հավելվածները:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ընդհանուր առմամբ ունի կոտ և ամբողջական տեսք: Հայցորդը կարողացել է պատասխանել իր իսկ կողմից առաջադրված հարցերին: Կան միայն առանձին մանր բացթողումներ, որոնց բացակայության դեպքում աշխատանքն առավել ևս կշահեր:

արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի շնորհմանը ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման
մեթոդիկա /Անգլերեն լեզու/ մասնագիտությամբ:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Իննա Ռ. Սարգսյան

Հաստատում եմ՝

մ.գ.դ., պրոֆեսոր Իննա Ռ. Սարգսյանի ստորագրությունը՝

Վ. Բրյուսովի անվան պետական

լեզվա հասարակագիտական համալսարանի

գիտական քարտուղար՝



Հասմիկ Փիլավջյան